

ՀԱՅԵՐԵՆ ԽՈՍՈՂ ԿԱՐՊԵՏՆԵՐ՝ ՄՈՆՐԵԱՆՈՒՄ

Posted on September 9, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



Մարիամ Մուղղուսյան, Տորոնտո, 9 Սեպտեմբեր 2021

Իմ խորին համոզմամբ մենք սփյուռքին լավ չենք ճանաչում, ինչպես սփյուռքը հայաստանցուն լավ չի ճանաչում, այս տեսակ ակնարկները միմյանց ճանաչելու քայլերից են, և թերևս հայրենիք-սփյուռք կամուրջներից կարող է լինել:



photo by: Hrair Hawk

Գունավոր, ասեղնագործ կարպետների կախարդական աշխարհում կարելի է հայտնվել Կեօնճեանների տանը: Մի պահ կարելի է կարծել, թե գտնվում ես հայկական որևէ հեքիաթում. ամեն անկյունից հայկական նախշազարդերի գույներ են երգում, թվում է՝ այս գունավոր աշխարհում հայկական լեգենդներ են ապրում: Տասնյակ կարպետներից ոչ մեկը մյուսին չի կրկնում, սակայն կարծես միմյանց լրացնող, անվերջ պատմություն լինեն:

Այս բոլոր կարպետների հեղինակը Շաքե Կեօնճեանն է (օրիորդական ազգանունը՝ Պենօհանեան): Նրա ստեղծած կարպետները թվում է՝ ձեռագործ չեն, դրանք կարծես երևակայական աշխարհում են հայտնվել, հետո առանց մարդկային միջամտության հենց երևակայությունից էլ տեղափոխվել են իրական աշխարհ՝ շոշափելի, տեսանելի: Կարելի է ձեռք տալ դրանց ու շոշափելով՝ զգալ գույների սառը և տաք լինելը, լսել զրույցների ձայնը:

Շաքե Կեօնճեանի մեջ ձեռագործի նկատմամբ սերը թերևս ընտանեկան է, ասում է՝ մայրը գործել է դեռ 13 տարեկանից, սակայն ինքն իր հայրական տանը չի գործել, սկսել է շուրջ 35 տարի առաջ, երբ Եգիպտոսից տեղափոխվել են Կանադա:

Հենց այստեղ էլ՝ Մոնրեալի նրա տանը, հանդիպեցի նրան:

Մեկ կարպետ՝ մեկ տարի

«Օրական 5-6 ժամ աշխատելու դեպքում մեկ տարում մեկ աշխատանք է ստեղծվում: Ուվիետև մեկ գորգի վրա մի քանի ամիս են գործում մի քանի հոգի, իսկ ես մենակ եմ գործում, դրա համար էլ մեկ տարի է տևում: Ամեն մեկն իմ մեկ տարվա կյանքն է», - ասում է Շ.Կեօնճեանը :



photo by: Hrair Hawk

Տեխնիկական առումով այս կարպետները ստեղծելը պարզ բան չէ. բոլոր աշխատանքները հաշվելով պետք է անի, և եթե որևէ տեղ սխալվում է, ապա պետք է քանդի, կրկին գործի, քանի որ փոքր սխալն անգամ հետո աչք է զարնում:



photo by: Hrair Hawk

Աշխատանքային ընթացքին իրապես նման է իրաշքի. լրիվ ճերմակ կտորին հանկարծ հայտնվում է գունազարդ պատկեր՝ ճիշտ կտավի նման. ճերմակ ոչնչին հայտնվում է հեքիաթ:

Շուրջ երեք տասնյակ կարպետներից շատերը Շաքե Կեօնճեանը նվիրաբերել է հայկական կազմակերպություններին՝ հայկական նախագծերին աջակցելու համար: Ըստ եուրոյան դրանցից շատերը ծառայել են հայապահպանության զանազան ծրագրերի՝ հետագայում շարունակելով իրենց ուրույն կյանքը:

Ինչպե՞ս



photo by: Hrair Hawk

Կտեսնեանների տան ամեն անկյունը հայկական գույներ են, խոսքը՝ մաքուր, գրական հայերեն: Ինչպե՞ս է ստացվել, որ ծնված չլինելով Հայաստանում, այնուամենայնիվ, այսքան ամուր կապ է գգում հայկականության նկատմամբ, հատկապես, որ իր հայրական կողմը՝ Պէսօհանեանների ընտանիքը, Ցեղասպանությունը վերապրածներից են՝ Արևմտյան Հայաստանից՝ Մարզվանից, իսկ տիկին Շաքէի մայրական մեծ պապը 1800-ականներին է գնացել Ակնից Մանսուրա (Եգիպտոս):

Հաստատվելով Եգիպտոսում՝ նրանք պահպանել ու սերնդետուրնդ են փոխանցել հայկական սովորույթները,ավանդույթներն ու լեզուն՝ հայերենը: Շուրջ երկու դար չապրելով հայրենքում՝ այնուամենայնիվ, Պէսօհանեանների, ապա նաև Կտեսնեանների ընտանիքները կարողացել են պահպանել իրենց ազգային ինքնությունը:

«Հայկական շունչը հայրիկիս մեջ էր, դա ինձ վրա ազդեց շատ: Եգիպտոսում շատ ակտիվ համայնքային գործունեություն էր ծավալում, նրան գաղութի հայրիկ էին ասում», -պատմում է Շ. Կտեսնեանը, հետևաբար կարծում է, որ սփյուռքում հայ մնալու առաջին նախապայմանն ընտանիքն է:

Հարցնում եմ՝ ինչպես են շուրջ երկու դար կարողացել պահպանել մշակույթն ու լեզուն, ինչպե՞ս է պատահել, որ չեն ծուլվել, և արդյոք հայ մնալը բարդ չէ՞ Կանադայում: «Գիտես, Եգիպտոսում ավելի դյուրին էր ազգային ինքնության պահպանումը, քան Կանադայում է, քանի որ այնտեղ կրոնի ու լեզվի պատ կար: Այստեղ պատեր չկան, այդ իմաստով ծուլումն ավելի դյուրին է Կանադայում: Հետևաբար, Կանադայում ծնված երեխայի կապը Հայաստանի հետ խիստ կարևոր է: Սա էլ, իհարկե, կախված է ընտանիքից...»:

Շ. Կտեսնեանի խոսքով, սակայն, հայ մնալու, երեխային հայրենիքը սիրել տալը բառի մակարդակով չէ, որ իրականացվում է: Եթե ծնողն ինքը հոգևոր կապ է ունենում հայրենիքի հետ, եթե այդ կապն իրոք կա, իր երեխան էլ է սիրելու, անկախ ամեն ինչից, և ձգտելու է անպայմանորեն դեպի իր ակնունքները, հայկական ակունքները:



Լուսանկարը՝ Նորա

Գաղտնագիր խաչեր**ԿԵՆՈՃԵԱՆ**

photo by: Hrair Hawk

Սկզբունքային է արդյոք հայկական զարդանախշեր գործելը, թե ոչ, չէ՞ որ կարելի է պարզապես սիրել ասեղնագործ կարպետներ ստեղծելու արհեստը: Տկն. Շաքեն ասում է, որ իր համար կարպետները սուկ ձեռագործ չեն, դրանք առաջին հերթին հայկական նախշեր են, հետո նոր կարպետներ: «Ես ամենուրեք հայկական նախշեր եմ փնտրում: Անգամ այն գորգերում, կարպետներում, որոնք ներկայացվում են թանգարաններում որպես թուրքական, ես տեսնում եմ հայկական հետքեր. փոքրիկ խաչեր, որոնք ոչ մեկը չի նկատում, բայց դրանք հայկական են, կան նաև գաղտնի հայերեն գրեր: Օրինակ «Յ» գիրը կա, որ Յիսուս է նշանակում, հետևաբար դրանք հայեր են ստեղծել, հայկական են արդեն իսկ, գաղտնագրված գորգեր ու կարպետներ են»: Տիկին Շաքեն նաև պատմում է, որ մահմեդականները կենդանիներ չեն պատկերում իրենց նախշերի մեջ, իսկ հայերը պատկերում են կենդանիներ, և դրանք կարելի է տեսնել գորգերում, կարպետներում: Դրանք մեր ժողովրդի պատմության մի մասն են, մշակութային առանձնահատկությունները:

Իզուր չէ, որ հայկական գորգերից ամենատարածվածը հենց վիշապագորգն է, որի ակունքները նախաքրիստոնեական ժամանակներ են հասնում՝ ընդհուպ մինչև հնագույն աստվածներից Վիշապաքաղ Վահագն աստծո պաշտամունք: Վիշապի պատկերներով գորգերն ու կարպետները խորհուրդ են ունեցել հին հայերի համար. հավատացել են, թե պաշտպանված են չար ուժերից...

Այս լեզվերի չհավատալը դժվար է Շ. Կեոնճեանի ստեղծած աշխարհում նույնպես:

Պահպանում, զարգացում, փոխանցում

Տեխնոլոգիաների արագ զարգացող աշխարհում արդյոք այս արհեստով հետաքրքրվողներ կա՞ն, հայ երիտասարդները ցանկանու՞մ են արդյոք սովորել, այն էլ Մոնրեալում, որտեղ այնքան շատ են գայթակղությունները հայկական կրթական, մշակութային կանոնավոր կյանք չունենալու համար: Վերջիվերջո, կիրարական արվեստի այս տեսակը պահպանելը, զարգացնելն ու սերունդներին փոխանցելը կարևոր առաքելություն է, այն էլ սփյուռքում, որտեղ ուժացման գործընթաց է տեղի ունենում, իսկ ձեռագործի այս տեսակը դատապարտված է, եթե երիտասարդներն այն չսովորեն՝ հետո իրենց երեխաներին փոխանցելու նպատակով:

Նախքան համավարակի խստացումները, Շաքե Կեոնճեանը ՀՕՄ-ի երիտասարդ աշակերտուհիներին է սովորեցրել ասեղնագործ կարպետի տեխնիկան, սովորեցրել է գործել, փոխանցել է իր գիտելիքները՝ հույս ունենալով, որ այս արհեստը, այս արհեստի հայկական մեկնաբանությունները կփոխանցվեն սերնդե սերունդ: Նրանց աշակերտների մեջ է նաև իր դուստրը՝ Նորան, որ թերևս կշարունակի այս՝ արդեն ավանդական դարձած ավանդույթը՝ սերնդե սերունդ փոխանցելով հայկական ոչ նյութական մշակութային արժեքների պահպանության առաքելությունը:



Լուսանկարը՝ Նորա Կեոնճեան



Լուսանկարը՝ Նորա Կեռնճեան



photo by: Hrair Hawk

There are no comments yet.